ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

13.03.2020թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով պետության կարիքների համար մալուխային հեռուստատեսության ծառայության մատուցման պետական գնման պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ

ք.Երևան «16» մարտ 2021թ.

ՀՀ Ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս Ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու») մի կողմից և «Յուքոմ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության կորպորատիվ բաժնի ղեկավար Դ. Միրաքյանի, որը գործում է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից 03. 12. 2020թ. -ին տրված լիազորագրի հիման վրա (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և 13.03.2020թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/4» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.5 և 7.10 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին 13.03.2020թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով պետության կարիքների համար մալուխային հեռուստատեսության ծառայության մատուցման պետական գնման պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ մասնակի՝ 2021թ.-ի համար հատկացված ֆինանսական միջոցների մասով լուծել:

2. Այլ պայմաններ

2.1 13.03.2020թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով պետության կարիքների համար ՀՀ Ֆինանսների նախարարության համար մալուխային հեռուստատեսության ծառայության մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Ֆինանսների նախարարություն	«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	ՀՀ, ք. Երևան, Գ. Լուսավորիչ 9
ՀՎՀՀ՝ 02629081	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900011018539	Հ/Հ՝ 1570043102134100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 00024873
ՖՆ գլխավոր քարտուղար՝	Կորպորատիվ բաժնի ղեկավար՝
---------- Վ. Հարությունյան	---------- Դ. Միրաքյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ